ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/31

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով՝ Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի 26.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը 26.02.2018թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ սննդի մատուցման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ մրցույթ): Մրցույթով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2018թ. մարտի 6-ը, ժամը 11:00-ն:

Մրցույթի առարկան է հանդիսանում սննդի մատուցման ծառայության ձեռքբերումը:

Մրցույթի հրավերի 2-րդ մասի 2.5.1.ա կետի համաձայն՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ

պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին:

Ծանոթանալով հրավերի պահանջներին, և մասնավորապես, մրցույթի հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին՝ Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, պարզաբանում ստանալու նպատակով 06.02.2018թ. հարցում է ներկայացրել «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ին: Վերոհիշյալով Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը հայտնել է հետևյալը. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում: Նույն դրույթները պարունակում է նաև ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով հրավերի 3-րդ բաժինը: Ղեկավարվելով վերոհիշյալ դրույթներով՝ մրցույթի գնահատող հանձաժողովի ուշադրությունն եմ հրավիրում հետևյալ հանգամանքների վրա. ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով հրավերի առարկան է հանդիսանում սննդի մատուցման ծառայության ձեռքբերումը: Նույն հրավերի 2.5 կետի համաձայն՝ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ

սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին (հավելված 1.1 ճաշացուցակ): ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Գտնում ենք, որ ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով հրավերով նմանատիպ համարելով հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին, մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջները, քանզի նշված որակավորման չափանիշը հակամրցակցային է և խտրական, առաջացնում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների

շրջանակի նեղացում, չի խրախուսում մրցակցությունը, ինչպես նաև անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին: Գտնում ենք, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի պահանջները՝ հրավերով պետք է նմանատիպ սահմանվի պատրաստի սննդի մատուցման ծառայությունը՝ որպես տնտեսական գործունեության նույն խումբ, ինչը չի հակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջներին և չի դիտարկվի որպես խտրական և մրցակցությունը սահմանափակող:

«Հարց: Հիմք ընդունելով նշված փաստարկները՝ խնդրում եմ հայտնել, արդյոք գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, չի կատարի հրավերի փոփոխություն և չի փոփոխի հրավերի 2.5 կետի պահանջները, որպեսզի համանման համարվի պատրաստի սննդի մատուցման ծառայությունը: Կամ, միգուցե, որպես համանման գնահատող հանձնաժողովի կողմից կդիտարկվի ցանկացած պատրաստի սննդի մատուցման ծառայություն, այլ ոչ միայն խտրական բացառապես հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին (հավելված 1.1 ճաշացուցակ):

Ի պատասխան 06.02.2018թ.-ի հարցմանը՝ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ն 09.02.2018թ. ներկայացրել է հետևյալ բովանդակությամբ պարզաբանումը (պատասխանը հրապարակվել է նաև www.gnumner.am 13.02.2018թ.). Պարզաբանում: «Հարգելի մասնակից, մեր ընկերությունը հանդիսանում է բժշկական հաստատություն, որտեղ բուժական պրոցեսի մաս է կազմում նաև բուժական սնունդը՝ որպես դեղորայքային բուժման այլընտրանք և այն դիտարկել որպես պատրաստի սննդի մատուցում մեզ համար ընդունելի չէ, հիվանդի մոտ հետագա խնդիրներից խուսափելու համար: Ինչ վերաբերում է մրցակցության ապահովմանը և և/կամ խոչընդոտելուն, ապա կրկին անգամ պետք է նշեմ, որ հանձնաժողովի համար առաջնային նշանակություն ունի հիվանդի առողջական վիճակը և բուժման ճիշտ կազմակերպումը: Ի պատասխան ձեր հարցին նշեմ, որ այս պահին հանձնաժողովը հրավերի պայմանների փոփոխություն չի նախատեսում, իսկ պատրաստի սննդի մատուցման ծառայություններ տրամադրող մասնակիցների հայտերը հանձնաժողովի կողմից կուսումնասիրվեն հրավերով սահմանված կարգով»:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով հրավերի առարկան է հանդիսանում սննդի մատուցման ծառայության ձեռքբերումը:

Նույն հրավերի 2.5 կետի համաձայն՝ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին (հավելված 1.1 ճաշացուցակ):

Գտնում ենք, որ ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով հրավերով նմանատիպ համարելով հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջները, քանզի նշված որակավորման չափանիշը (միայն հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի) հակամրցակցային է և խտրական, առաջացնում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի նեղացում, չի խրախուսում մրցակցությունը, ինչպես նաև անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին, քանզի սննդի (տվյալ դեպքում պարտաստի սննդի) մատուցման ծառայություն իրականացնող բոլոր ընկերություններից տվյալ մրցույթին, փաստորեն, կարող են մասնակցել բացառապես հիվանդների համար դիետիկ սննդի ծառայության մատուցման մասնագիտական փորձառություն ունեցող մասնակիցներ:

Բացի այդ, ընկալելի չէ, թե ինչ նկատի ունի գնահատող հանձնաժողովը՝ մրցույթի հրավերի 2.5 կետում նման ձևակերպում ամրագրելով. սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին (հավելված 1.1 ճաշացուցակ):

Այս ձևակերպումը (պետք է համապատասխանի հրավերի պահանջներին (հավելված 1.1 ճաշացուցակ) նույնպես անհիմն կերպով բարդացնում է .մասնակցությունը տվյալ գործընթացին, ինչը նույնպես հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջների խախտում:

Ինչպես արդեն նշվել է, «Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ն, նկատելով մրցույթի հրավերի նշված թերությունները, ղեկավարվելով «Գնումների մասին» 29-րդ հոդվածի ՀՀ օրենքի 4-րդ մասի պահանջներով, տեղեկացրել է վերոհիշյալի մասին գնահատող հանձնաժողովին:

Սակայն գնահատող հանձնաժողովը, ի պատասխան ընկերության հարցմանը, հայտնել է, որ հրավերի պայմանների փոփոխություն չի նախատեսում, իսկ պատրաստի սննդի մատուցման ծառայություններ տրամադրող մասնակիցների հայտերը հանձնաժողովի կողմից կուսումնասիրվեն հրավերով սահմանված կարգով: Որպես հիմնավորում գնահատող հանձնաժողովը նշել է, որ պատվիրատուն հանդիսանում է բժշկական հաստատություն, որտեղ բուժական պրոցեսի մաս է կազմում նաև բուժական սնունդը՝ որպես դեղորայքային բուժման այլընտրանք և այն դիտարկել որպես պատրաստի սննդի մատուցում պատվիրատուի համար ընդունելի չէ, հիվանդի մոտ հետագա խնդիրներից խուսափելու համար: Ինչ վերաբերում է մրցակցության ապահովմանը և/կամ խոչընդոտելուն, ապա հանձնաժողովի համար առաջնային նշանակություն ունի հիվանդի առողջական վիճակը և բուժման ճիշտ կազմակերպումը:

Նման դիրքորոշմամբ, գնահատող հանձնաժողովը, ըստ էության, կարող էր հիմնավորել հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող և հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի ճաշացուցակի առկայությունը (Հավելված 1.1.), սակայն ոչ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը:

Գտնում ենք, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի պահանջները՝ հրավերով պետք է նմանատիպ սահմանվի պատրաստի սննդի մատուցման ծառայությունը՝ որպես տնտեսական գործունեության նույն խումբ, ինչը չի հակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջներին և չի դիտարկվի որպես խտրական և մրցակցությունը սահմանափակող:

Միևնույն ժամանակ, ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ որպես մրցույթի առարկա պետք է սահմանել պատրաստի սննդի մատուցման ծառայության ձեռքբերումը:

Հաշվի առնելով, որ սույն մրցույթով հայտերի ներկայացման վերջնաժամկետը դեռևս ավարտված չէ (սահմանված է 06.03.2018թ., ժամը 11:00-ն), ուստի ղեկավարվելով Օրենքի ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության պահանջներով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդից խնդրում ենք.

1. Պարտավորեցնել ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մրցույթի հրավերում կատարել հետևյալ փոփոխությունները.

2. Որպես մրցույթի առարկա սահմանել «Պատրաստի սննդի մատուցման ծառայության ձեռքբերումը»:

3. Հրավերի 2.5.1.կետի «ա» ենթակետում «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին (հավելված 1.1 ճաշացուցակ)» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում պատրաստի սննդի ծառայության մատուցումը»:

Ի լրումն Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի կողմից 26.02.2018թ.-ին ներկայացված բողոքի Ա/Ձ-ն հայտնել է, որ Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի բողոքի պահանջը փոխում է և շարադրում է պահանջը հետևյալ խմբագրությամբ՝

Պարտավորեցնել «ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կարիքների համար սննդի մատուցման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթը:»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. «<u>Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ն 02.03.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթ, որի հրավերրով սահմանված է որոշակի պահանջներ սննդի ծառայությունների մատուցման չափաբաժնի համար:

Հայնտում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությունը որևէ կերպ չի տարանաջատում սննդի մատուցման հնարավոր տարբերակներ, ուստի և մրցույթի հայտ ներկայացնելիս ընկերությունը որպես տնտեսական դաս ընտրել է սննդի ծառայությունների մատուցումը: Սակայն, միևնույն ժամանակ պետք է նշել, որ ընկերությունը հանդիսանում է վերականգնողական բժշկական կենտրոն և հիվանդներին սննդի մատուցումը հանդիսանում

է բուժական պրոցեսի բաղկացուցիչ մաս և որպես այդպիսին հիվանդներին մատուցվում է բուժական սնունդ: Ի տարբերություն հանրային սննդի ծառայությունների, այս դեպքում սնունդը հիվանդին մատուցվում է ոչ թե կենսական պահանջները բավարարելու, այլև բուժական պրոցեսը լիովին և ամբողջական իրականացնելու համար: Տվյալ հանգամանքը հաշվի առնելով, ինչպես նաև Գնումների մասին օրենսդրության հիման վրա, ընկերության կողմից սահմանվել են համապատասխան չափորոշիչներ՝ մրցույթի մասնակիցներից ճիշտ ընտրություն կատարելու համար: Ի վերջո սննդի ծառայությունները մատուցվելու են միայն հիվանդներին, այն էլ որպես բուժական պրոցեսի մաս, որն էլ, հիմք ընդունելով Գնումների մասին օրենսդրության դրույթները, հիմք է հանդիսացել սահմանելու համար չափանիշներ:

Այն հանգամանքը, որ տվյալ չափորոշիչները հակամրցակցային են և խտրական չի համապատասխանում իրականությանը, քանի որ փաստացի սննդի մատուցման ծառայությունը ընկերությունը գնում է բացառապես հիվանդների բուժման պրոցեսը ամբողջական իրականացնելու նպատակով:»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Միեր Սիմոնյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/31 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուդն ուսումնասիրել է Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը (այսուհետ նաև՝ Ա/Ձ) ՍՊԸ-ի կողմից 26.02.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Խորհրդին ներկայացված 02.03.2017թ. գրությունը, ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման հրավերը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը. .

«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ն հատուկ սննդի մատուցման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարել է ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Ա/Ձ Հայարփի Քալանթարյանը Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով մրցույթի առարկա է հանդիսանում սննդի մատուցման ծառայության ձեռքբերումը, սակայն Հրավերով սահմանվել է, որ նույն ընթացակարգի

իմաստով նմանատիպ են համարվում՝ հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը:

Ըստ բողոքաբերի Հրավերով պետք է նմանատիպ սահմանվեր պատրաստի սննդի մատուցման ծառայությունը՝ որպես տնտեսական գործունեության նույն խումբ, ինչը չի հակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջներին և չի դիտարկվի որպես խտրական և մրցակցությունը սահմանափակող:

«Հայարփի Քալանթարյան» Ա/Ձ-ն, պարզաբանում ստանալու նպատակով 06.02.2018թ. հարցում է ներկայացրել «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ին:

Ի պատասխան Ընկերության հարցմանը, «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ն հայտնել է, որ Հրավերի պայմանների փոփոխություն չի նախատեսում, իսկ պատրաստի սննդի մատուցման ծառայություններ տրամադրող մասնակիցների հայտերը հանձնաժողովի կողմից կուսումնասիրվեն հրավերով սահմանված կարգով: Որպես հիմնավորում գնահատող հանձնաժողովը նշել է, որ պատվիրատուն հանդիսանում է բժշկական հաստատություն, որտեղ բուժական պրոցեսի մաս է կազմում նաև բուժական սնունդը՝ որպես դեղորայքային բուժման այլընտրանք և այն դիտարկել որպես պատրաստի սննդի մատուցում պատվիրատուի համար ընդունելի չէ, հիվանդի մոտ հետագա խնդիրներից խուսափելու համար:

Բողոքի քննության նպատակով 02.03.2018թ. կայացած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը Խորհրդին հայտնեց, որ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ն հանդիսանում է բացառապես բժշկական առողջապահական հիմնարկություն, որը մատուցում է բժշկական վերականգնողական ծառայություններ՝ զուգորդված սննդամթերքային բուժմամբ, այդ իսկ պատճառով «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ն դիետիկ սննդի մատուցման պահանջ ունի: Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությունը չի տարանջատում սննդի մատուցման հնարավոր տարբերակներ, ուստի որպես տնտեսական դաս ընտրվել է սննդի ծառայությունների մատուցումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որը սնունդը մատուցվում է բուժվող հիվանդին, այդ նպատակով Ընթացակարգի Հրավերի համաձայն նմատատիպ են համարվում՝ հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը:

Ընթացակարգի Հրավերի 1.1 հավելվածով հաստատված ճաշացանկով նախատեսված են օրինակ հետևյալ ճաշատեսակները՝ բորշ ուկրաինական, չախոխբիլի, քաբաբ, աջաբսանդալ մսով, կոլոլակ լցուկով և այլն:

Ներկայացված ճաշացանկի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ճաշացանկը ամբողջությամբ բաղկացած չէ դիետիկ ճաշատեսակներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հեդվածի 2-րդ մասի՝

- 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.
- 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 61-րդ կետի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

• 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ընթացակարգի Հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի ա. պարբերության համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, որը պետք է համապատասխանի հրավերի պահանջներին:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթի գնման առարկա է հանդիսանում՝ սննդի մատուցման ծառայության ձեռքբերումը, իսկ Ընթացակարգի հրավերի 2.5 կետով սահմանվել է, որ նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ ճաշացանկը բաղկացած չէ միայն դիետիկ սննդամթերքից:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթի հրավերով որպես նմանատիպ համարվող գործարք՝ համարվող հիվանդների համար պատրաստվող և մատուցվող դիետիկ սննդի կազմակերպումը, սահմանելով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հեդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ տվյալ սահմանումը խտրական է ու սահմանափակում է մրցակցությունը և անհիմն կերպով բարդացնում է հնարավոր մասնակցի մասնակցությունը գնման գործընթացին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա/Ձ Հայարփի Քալանթարյանի 26.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Պարտավորեցնել ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ-ի կարիքների համար սննդի մատուցման ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՖԲԳՀԻ-ԲՄԾՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ